Համմեդ պատմել է ինձ՝ Վակիդիի, Զաբ Ի. Եղեդի, Ռաշիդ Ի. Սադի ասելով՝ թէ Իյադ նուաճեց Միջագետք, քաղաքները՝ խաղաղութեամբ, իսկ երկիրը՝ բռնութեամբ։ Կարծում են, թէ երբ Իյադ Ռաքքայից խառան եկաւ, նա գտաւ քաղաքը դատարկ, որովհետեւ բնակիչք գաղթել էին Ուռհայ. Ուռհայի նուաճումից յետ այստեղ փոխադրուած խառանցիք խաղաղութիւն կապեցին (Իյադի հետ) իրենց քաղաքի համար. Իյադ շնորհեց նոցա նոյն պայմաններն, որ տուած էր Ուռհայեցոց։ Ինձ պատմել է Աբու Այուբ, Ռաքքայի տղայոց ուսուցիչը, թէ՝ ինչպէս նա լսել է Հաջաջ Ի. Աբի Մունի Ռուսաֆիից, իսկ սա՝ իւր հօրից, իւր պապից՝ Իյադ նուաճեց (նախ) Ռաքքայ, ապա Ուռհայ, ապա Խառան, ապա Սամուսատ[1], առաջին (այսինքն Ռաքքայի) խաղաղութեան հիման վերայ։ Յետոյ եկաւ Սրուճ, Ռասկիֆայ[2] եւ Սդէրոկ երկիրը, նուաճեց այս տեղիք եւ խաղաղութիւն կապեց ամրոցաբնակչաց հետ՝ Ուռհայի դաշին հիման վերայ։

Երբ Իյադ լուր ստացաւ, թէ Սամուսատի բնակիչք ապստամբեցան, նա գնաց եւ պաշարեց քաղաքը, մինչեւ որ առաւ։ Իմանալով, որ Ուռհայեցիք դաշն խզել են, նա բանակեցաւ քաղաքի առջեւ. բնակիչք բաց արին նորա առջեւ դռները,

---

զօրէից մասին, որոնց դրութիւնն համեմատաբար շատ առաւել ծանր պէտք է լիներ օտարի իշխանութեան տակ. դրաւելով երկրի գլխաւոր կեդրոնները երբեմն երկմտի, բայց միշտ բացառապէս իրենց ձեռնտու "խաղաղութեան պայմաններով՝" Արաբացոց հեշտ էր զէնքի զօրութեամբ հնազանդեցնել երկրի այլ աւանք եւ ամրոցներ։

1 Σαμόσατα (Ptol., Jos. Flavius VII, Dio Cassius), Σαμόσατα, πόλις Κομμαγηνῆς (Strabo, Steph. Byz.); Samosata (Plin., Amm. Marc.).

2 Ῥεσκίφα (Ptol.), Κάστρον Ῥισκηφᾶς (Gelzer, ibid. 913). Jakut: رَأْسُ كَيْفَا (Ռաս Կայֆայ) Խառանին մօտ։